# «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000164, 1-ին դաս

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԱԾ Է

2024-08-13, «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

ՀՀ, ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԱՑՈՒ Փ., 83, 40 ԲՆ.

Գործողության ժամկետը՝ 13.08.2029թ.

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N 1/232 - 24

<<25>>__դեկտեմբերի_2024թ          ԼԻՑ ՔՊԼ-000164, 1-ին դաս

*Պատվիրատու՝ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

*Նախագծող՝ «ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ*

*Տնօրեն՝ Կ.ՎԱՍԻԼՅԱՆ*

<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն նախագծային փորձաքննությունը դիտարկելով ՀՀ Վայոց Ձորի մարզի Հորս բնակավայրի Չեսար Օրբելյանի պալատի և եկեղեցու վերականգնում և տարածքի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ երաշխավորում է հաստատման:

Նախահաշվային արժեքը կազմում է՝ 364 170.96 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ- ն:

Առդիր՝ եզրակացությունը 2 էջից:

Տնօրեն՝          Ն. Սիրեկանյան

«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

տնօրեն Ն. Միրեկյան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Հորս բնակավայրի Չեսար Օրբելյանի պալատի և եկեղեցու վերականգնում և տարածքի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթեր

*Պատվիրատու՝ ՀՀ ԿՐԹՈՒՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

*Նախագծող՝ «ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ*

*Տնօրեն՝ Կ.ՎԱՍԻԼՅԱՆ*

Սույն նախագիծը կատարված է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Նախատեսվում է ՀՀ Վայոց Ձորի մարզի Հորս բնակավայրի Չեսար Օրբելյանի պալատի և եկեղեցու վերականգնում և տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում:

Նախագծով նախատեսված է հետևյալ շինարարական աշխատանքների իրականացում՝ բետոնե նախապատրաստական շերտի իրականացում, միաձույլ ժապավենային հիմքերի կառուցում, միաձույլ թաղերի կառուցում կրաբետոնեից, հարթեցնող շերտի իրականացում ցանցով, միաձույլ կետային հիմքերի կառուցում, միաձույլ գոտու կառուցում կրաբետոնից: Պատերի վերականգնողական աշխատանքների կատարում, գոյություն ունեցող պատերի ամրակայում և կարանախցում, սրբատաշ պատերի նոր տաշ ու շարի իրականացում, գոյություն ունեցող բեկորների տեղադրում: Քիվերի իրականացում, թաղի, ծածկի և գմբեթարդի նոր տաշ ու շարի իրականացում: Բեմի հատակի և աստիճանների նոր տաշ ու շարի իրականացում: Մկրտության ավազանի և խորշերի իրականացում, ավագ սեղանի իրականցում: Դռան պատրաստում և տեղադրում: Հազարաշեն տանիքի իրականցում: Հողային աշխատանքների կատարում, հենապատերի կառուցում և երեսապատում

**տրավերտինով, գլխաթասերի իրականացում: Սալահատակի իրականացում, աստիճանաձև բետոնե պատվանդանների երեսապատում տրավերտինով: Տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացում:**

*Նախահաշվային մաս*

Աշխատանքների նախահաշվային արժեքը ներկայացված է ամփոփ հաշվարկով

Հաշվարկը կազմում է **364 170.96** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշիվների հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը **2272.65** և մեքենաների շահագործման ինդեքսը **3022.31**

Նյութերի արժեքն ընդունված է 2024թ. **N 11** «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով :

1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան

3. Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին

4.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին

5. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

*Ուսումնասիրելով ներկայացված նախագիծ- նախահաշիվը*

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, նախահաշիվը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

***Տնօրեն՝ Ն. Սիրեկանյան***

***Փորձագետ՝ Տ. Վիրաբյան***